

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ԱՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՈԶԱՃԵԱՆ

Գ. ՇԲԶԱՆ

1399 ԴԷԿՏԵՄԲԵՐ 13

ԹԻԲ 74

„حازره كيداق“ عزه تسي

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	30 Ղր.
Դաւառաց համար	60 »
Արտասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆՈՒԿԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն
Քողաքական Տեսութիւն
Ծովամույն. . . (Այլագովակիւն)
Բաց Նամակ
Երկրագործութիւն
Հայուհիք եւ Կուսաստանք ի Կիլիկիա
Քաղ. Պատմ. Ժամանակակից Եւրոպիոյ
Առիւծին Զիարդաւր (Ոտանաւոր)
Ազգ

ԹԷՈՂԻԿ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Խ. Յ. Պ.

40 Փարայ 40

Տպագրութիւն «ԾԱՂԻԿ» օրաթերթի
Կ. Պոլիս, Ղալաթիա, Համսի Փաղա խան

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

RECEIVED

APR 10 1954

FROM THE PHYSICS DEPARTMENT
UNIVERSITY OF CHICAGO
TO THE PHYSICS DEPARTMENT
UNIVERSITY OF CALIFORNIA
AT BERKELEY

RECEIVED

APR 10 1954

PHYSICS DEPARTMENT

CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՐԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԻ ՏԵՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ա

ԲԻԻԶԱՆԻ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. ՇՐՋԱՆ

1899 ԴԵԿՏԵՄԲԵՐ 18

ԹԵԹ ԴԸ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատրիարքարանի ժողովները. — Ընդհանուր
գործունեությունը մը. — Նպաստից Սնտու-
կը. — Յորդոր Ս. Պատրիարքին. Աւե-
լորդ Խնդիրներ :

Ընդհանուր ակնարկ մը Պատրիար-
քարանի գործերուն վրայ ցոյց կուտայ
մեզ երեւոյթ մը արդիւնաւոր հանդար-
տութեան: Ամէն նախապաշարումէ աղատ
խորհելով, ստիպուած ենք խոստովանիլ
թէ Պատրիարքարանի գործունէութենէն
դժգոհ ըլլալու զօրաւոր պատճառ մը
չունինք: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը
արդէն գործի մարդ է. գրեթէ կարգա-
լէն երբեմն չէր յոգներ, հիմակ ալ խոր-
հելէն չի յոգնիր: Ըսենք այսպէս՝ ճշմար-
տութիւնն ըսած ըլլալու համար: Իրեն
չափ կոկիկ ու գործունեայ է նաեւ իր
գլխաւոր խորհրդակից ժողովը, Քաղա-
քական ժողովը, որոյ աշխատութեան ե-
ղանակին համար ինչ որ ալ ըսուի, հարկ
է խոստովանիլ թէ կարելիութեան սահ-
մանին մէջ կը կատարէ իր պարտաւորու-
թիւն, որպէս կը պահանջեն ժամանակն
ու դիւրութեանց աստիճանք: Կրօնական

ժողովն ալ իր աշխարհիկ խորհրդատու-
տուններուն չափ ու թերեւ աւելի կը
գործէ շատ մը նախորդ և նախկին կրօն-
ժողովներու աչալրջութեան և շրջահա-
յեցութեան չափով: Ամէն Գշ. իր դի-
ւանին վրայ դառնուած օրակարգերը կը
տնտեսէ օրինակելի կարգապահութեամբ,
որքան սր իր որոշումներ կարգ մը կար-
ծեցեալ լուսամիտներու կամ ժամանա-
կին ամէն տեսակ հոսանքներէն գլխի-
վայր երթալու վարժ խորհողներու հա-
ւանութեան արժանացած չեն: Ներկայ
կրօն. ժողովոյ վրայ սա՛ մեծ առաւելու-
թիւնը կը տեսնուի մանաւանդ որ յամր
կը ճեպի. ծայրայեղութեանց չի գիմեր.
ամէն հովի առաջատար չի բանար: Ո՛չ
գանգատողներուն այնքան կը հաւատայ,
ոչ ալ արդարացուցիչ պատճառներուն
այնքան կարեւորութիւն կուտայ, գոր-
ծելու և որոշելու միջակ ճամբայ մ'ընտ-
րած է, և ըստ մեզ այս է գործնական
առաքինութիւնը կամ պարտաճանաչու-
թիւնը, որք համաձայն են ժամանակին
ոգւոյն, Դիտէ՞ք, ի՞նչ պատուական ա-
ռաքինութիւն է հասարակաց ողջմաու-
թիւնը, առիթներ կը ներկայանան երբ
կարելի չէ ծանրանալ սա՛ կամ նա՛ խընդ-

րոյն վրայ ու յաւակնել թէ այս պէտք է
այժպէս ըլլայ անպատճառ : Հոսանքին
դէմ մահու չափ բռնանալ յիմարութիւն
պիտի ըլլար . պարագայք մեր աչքին
առջեւ պէտք է բերենք , եւ հպտա-
կինք իրականութեան ոյժին՝ որուն դէմ
արդէն անպատիժ կարելի չէ կռուիլ :
Այո՛ , կը հաւնինք Կրօն . խոշոր այ արդի
կազմակերպութեան և գործունէութեան
եղանակին , եթէ ենթադրենք իսկ թէ
իր որոշումներ գործադրութեան ուժեղ
հանգամանքը չունենան յաճախ : Պահան-
ջել ինչ որ գրէթէ անկարելի է , անարա-
մաբանական ուղղութիւն մ'է որ կրնայ
զմեղ մորերեցնել , և անտեսել տալ ներ-
կայ բարիքը , եթէ կրնանք սակայն այս
պէս կոչել շինուած և պարտաւորուած
վիճակ մը :

* * *

Բայց ներկայիս մէջ ամէնէն միտթա-
րական երեւոյթն է Պատրիարքարանի
մէջ Նպատակից Մատուկի մը գոյութիւնը :
Այդ Մատուկին պահանջը ո՛րքան որ
սակայն ստիպողական են և բազմադէմ
նոյնքան նիհար են աղբիւրները և ան-
բաւական : Ընդարձակ սահմանի մը վրայ
գործելու յատկացուած հաստատութիւն
մը , որպէս է Նպատակից Մատուկը , պէտք
է գոնէ ամէն օր քիչ ու շատ հաւատարմ
ընդունի թէ աղբիւրները կը վազեն , կը
շարունակեն վազել , գոնէ չիթ տու չիթ :
Ոչ միայն իւրաքանչիւր բարեկեցիկ , այլ
նաև իւրաքանչիւր անհատ , միջակէն
վեր ալ , վար ալ , պարտաւոր է փութալ
և օգնութեան ձեռք կարկառել : Եթէ
խորհինք պահ մը թէ անհրաժեշտ է
օգնել , ո՛չ միայն բան մը պիտի տանք
անպատճառ , այլ ճշմարիտ կարեկցու-
թեամբ պիտի տանք : Պէտք է ըսել թէ
Ազգ . Պատրիարքարանը հարկ եղածն ը-
բաւ և նոյն իսկ աւելին ըրաւ նախաձեռ-
նութեամբ Ս . Պատրիարքին՝ կանոնաւոր
գործունէութեան շրջանակի մը մէջ
գնելու Նպատակից Յանձնաժողովոյ գոր-
ծը : Ոչ ոք կրնայ այս մասին գերազան-

ցել Ս . Պատրիարքին փոյթն ու եռանդը ,
մանաւանդ օգնութիւն աղերսող Շրջա-
բերականին իմաստը կարելի չէ տալ այն-
քան կուռ և հասկնալի ոճով՝ որքան նոյն
Շրջաբերականն հատկացուց աղէտքին ծան-
րութեան , անոր քանակին եւ որակին
նկատմամբ : Տա՛նք , եղբայրներ , օգ-
նենք Ս . Պատրիարքին յանուն աղքա-
տաց՝ որք հայ չունին կամ պատուարա-
նի մը կարօտը կը քաշեն : Բարեգութ
կառավարութեան խնամքը , Ս . Պատրի-
արքին պատրաստակամութիւնն ու անձ-
նակրութիւնն ամենազօրաւոր միջոցներն
են եթէ ա՛յ բառնալու , գոնէ ամուրքելու ,
կակցելու թշուառութիւնները զորո՞ւ ձմե-
ռը սաստկացուց , ինչպէս աշունն արդէն
տարապայման կերպով կերպով դժուարի ը-
րած էր : Շատ լաւ կ'ըլլայ որ ամէն շաբ-
թու հրատարակութեան արտին պաշտօ-
նական ցուցակներն սնոնց որք կը փու-
թան նպատակ և պատասխանել Ս . Պատ-
րիարքին հրաւերին : Ո՛րք ժողովրդեան
անաղարտ մասը շատ բան կրնայ ընել
իր ազգակիցներուն դառնութիւնը թե-
թեցնելու և կարօտութիւնները մասամբ
բաժնելու համար :

Ճամանակ կ'ըլլայ որ ընկերային կեան-
քին մէջ բոլոր ուշադրութիւնք կը սեւե-
ռին մէկ կէտի վրայ . հիմակ այդ կէտը
մեղ համար նպատակաւ գործողութիւնն
է : Աւելորդ ինդիւրներու վրայ երբեմն
վիճաբանութիւններ կը յարուցանենք , և
այնպիսի եռանդով կը նետուինք անոնց
մէջ որ եթէ անոր քառորդը գործածե-
ինք լաւագոյն դատի մը , անհամեմատ
օգտաւոր կ'ըլլար : Փցուն ինդիւրներով
ժամախաճառ կ'ըլլանք . մեր վտրը կուշո-
ւէ , մեր բախտը չինած ենք , մեր ապա-
գան երաշխաւորած , ա՛յ կը մոռնանք
տուն ու երգիք , ինչպէս կ'ըսուի ռամկօ-
րէն , և կը մը մխրճինք ունայն պայքար-
ներու մէջ : Ո՛չ , այսպէս ընելով , ո՛չ մի-
այն մեր ժամանակին յարգը գիտցած
չենք ըլլար , այլ անտեսած կ'ըլլանք բա-
րեգործութիւնը , ոգորմաւորութիւնը հե-

ուայուցած, ազնիւ զգացումներն ալ մի-
ահամուռ բթացուցած: Ո՛չ մեր խիղճը
կը վկայէ թէ այդ ուղիղ է: ոչ ալ աշ-
խարհի կամ ընկերութեան առջիւ կրնանք
փառաբանել թէ մեր ըրածն ուղիղ է:

Անցեալ օր ճիշտ այսպիսի խնդիրներ
բու, այն է նպատեյու ու զանազան կեր
պերով նպատեյու խօսք կ'ըլլար, կ'ա-
ւարէինք թէ ժամանակն ընտրել խորել
չենք գիտեր: Եկեղեցւոյն ներկայ վիճա-
կին մէջ կը յարուցանենք, զոր օր. ա-
մուսնայութեան ինդիր. կատա՞կ կ'ընենք
թէ ըրջօրէն կ'զբաղինք եկեղեցական բա-
րեկարգութեան խնդրով: Եթէ այսպէս
խորհողներուն հիմա մեք չունինք բա-
րենիշ տալու, զոնէ կը խտտանանք հին-
ցած պնծէ միջանակ մը տալ անոնց, որք
հիմա երբ կը պնդեն որ ամենակարեւոր
ընկերային և միանգամայն կրօնային
խնդիր մը ծեծենք, խտուենք ներկային
մէջ, փորը կուշա մարդոց դարձ չէ՞ ա-
սիկա:

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատերազմը. — Միջազգային Կայսրիւնը. —
Զինակցութեանց խնդիրը. — Անգլիա, Դեր-
մանիա եւ Միաց. Նահանգները. Մա-
քիմիի Պատգամագիրը. — Մտահոգու-
թեան առիթ տուող պարագայ չի
կայ:

Աշխարհացոյց քարտէսին վրայ հաղիւ թէ
երեւոյժ փոքրիկ ազգ մը այս միջոցիս ճա-
կատած է Ներսիսայի ամէնէն հզօր պետու-
թեան դէմ: Ահա երկու ամիս է ի վեր անգ-
լիական ամէնէն հուժկու թնդանօթներ կը
գոռան ու կը գոռան, բայց չկրցին լուծեան
դատադարանէ պօէրական թնդանօթները:
Պատերազմին պատճառները ծանօթ են ինչ
չափով որ երկուստեք ուղած են յայտնել: Պօ-
էրք չուզեցին ըստ ամենայնի քաղաքային կամ
քաղաքացիական իրաւունքներ չնորհել թը-

րանավալի անգլիացի հին ու նոր դաղթա-
կաններուն, մինչդեռ Անգլիա կը պահանջէր
որ իր այդ ազգակիցք վայելէին պօէրական
ու անձնաշնորհումներ, Պօէրի պէս քուէ-
արկէին, Պօէրի պէս ամուռ ունենային Ն-
րնալի Ժողովոյ մէջ և զատաւորական բեմե-
րու վրայ: Անգլիա այսպիսի պահանջումներ
ընելու ու է իրաւունք չէր ունենար, եթէ
նախապէս համոզուած չըլլար որ Թրանսվալի
պետութեան վրայ գերիշխանութեան իրա-
ւունք մ'ունի. ահա ճիշտ այդ իրաւունքն էր
զոր Պօէրք չէին ճանչնար Անգլիոյ համար:
Եթէ ընդունինք իսկ որ պատերազմին պատ-
ճառները բնական էին, այսինքն պատերազմը
պիտի հետեւէր ի հարկէ անգլիական պահան-
ջումներէն, որք հակառակ իրենց առաւել
կամ նուազ պատմական հիմերուն կը մեր-
մուկին Պօէրներուն կողմէ, անժխտելի է թէ
մարդկային կիրքերն ալ իրենց բաժինն ունին
այն պատահականութեանց մէջ որք ուղղա-
կի առաջնորդեցին այն հանրային մեծ ա-
ղէտքին՝ որ ազգերու պատմութեան մէջ ծա-
նօթ է պատերազմ տնուամբ: Հարկ է ըսել
թէ ո՛չ միայն Անգլիոյ դաղթային նախարար
Չէմպլէնի յաւակնոտութիւնները՝ այլ նաեւ
Թրանսվալի Հանրապետութեան նախագահ
Քրիւկէրի յամառութիւնն ու տեսակ մը չա-
փազանց մաքրակրօն ազանդաւորութիւնն ու
պօէրական իրաւունքներու ծայրայեղ նուխ-
րականութեան զգացումն ո՛չ նուազ սատա-
րեցին տառջ բերելու ներկայ պատերազմը:
Եթէ կերտով մը ճիշտ է որ Արատողնի մը
վարչութեան օրով թերեւս Անգլիա իրմէ
խնայուած տեսներ ներկայ ձախողութեանը,
նոյնքան ալ ճիշտ է որ Պօէրներու ներկայ
սերունդը այլեւ 1881—2ի սերունդը չէ, ա-
ւելի համեստ, աւելի տրամաբանական հայ-
րենասիրութեամբ քան թէ հայրենամուտ-
թեամբ: Արատողնի ժամանակակից Պօէրք
անշուշտ պիտի մտածէին որ բացարձակ եւ
անիրաւախօս ընթացք մը իրենց կողմէ ուղ-
ղակի պիտի առաջնորդէր իրենց տնկախու-
թեան փճացման, եւ այդ պատճառաւ էր որ
ընդունեցին իրաւախօս ըլլալ Անգլիոյ հետ՝
նոյն իսկ իրենց փառաւոր յաղթութիւննե-
րէն ետք ճանչնալով անգլիական գերիշխա-
նութիւն մը. որովհետեւ, ինչ որ ալ ըսուի
անգլիական ընչաքաղցութեան և անյազու-
թեան համար դաղթային դործերու մէջ, սա՛

ստոյգ է որ դաշնագրութեան մէջ ժամանակին Պօէրք ճանչցած են անգլիական գերիշխանութիւնը :

Անգլիական պարտութիւններն ու ձախողութեանները կը պատահին իրարու ետեւ, գրէթէ անընդհատ շարքով մը : Այսեցինք դեռ կարեւոր յաղթանակ մը զոր արձանագրենք անգլիացի զինուորներուն համար : Էլանտուրակի կէս մը նահանջ, կէս մը փախուստ համարուող զինուորական զործողութիւնն հազիւ թէ անգլիացի ճարտիկ թղթակիցներու շնորհիւ զինուորական աշխարհը կը պատրաստուէր յաղթանակ մը արձանագրել ի նպաստ Մեծն Բրիտանիոյ, և ահա Տընտիի գրաւումը, Զօր. Երկրի նահանջը, Լէտիսիթի պաշարումը, Մօտորը—Բիվերի Զախարիսի պարտութիւնը, Սիւրմուէրի գրէթէ ամօթալից ձախողութեամբ, ինչպէս նաև բազմաթիւ գերիներու, — Թէ՛ սպայ և թէ՛ վինսոն — կարավանն ի Բրեդօրիա, աւելցուցին Քիմպրիի և Մէքքինկի արդէն իսկ բաւական վնասեցուցիչ պարագաները : Անգլ. օրաթերթերն ամէնէն աւելի պախարակեցին երբեմն Իտալիոյ ընթացքն որով մինչեւ Նիովարիոյ սիրտը կ'ուզէր տանիլ իտալական անօգուտ գրաւում մը, և որ ի վերջոյ անգարմանելի աղէտ մը դարձաւ թերակզդիին բնակչաց և նոյն իսկ կառավարութեան համար : Կ'երևի թէ նմանօրինակ սխալ մ'ալ այս անգամ իրենք Անգլիացիք գործեցին՝ չափազանց ինքնավստահ շարժում մ'ընելով քաջասիրտ Պօէրքներուն դէմ, անոնց ճանչցած, սերտած կէտերուն, ա՛յն է հովիտներուն, բլուրներուն, սարերուն վրայ և ձորերուն մէջ, Հարիւր տարիէ ի վեր առաջին անգամն է որ Անգլիական զէնքերը կրեցին նմանօրինակ պարտութիւններ : Պատերազմին վախճանը կը թուի հետզհետէ հետաքրքրական ըլլալ : Հետեւինք ուշադրութեամբ և զիտենք մէն մի ռազմական շարժում, որ կը կատարուի Հարաւ-Ափրիկէի ցարդ կոյս անտառներուն, լեռներուն, բլուրներուն վրայ :

Բայց առ այժմ թողլով այս սկզբունքի խնդիրները, վայրկեան մը խօսինք թէ պատերազմին ներկայ վիճակն ապագային համար ի՞նչ կը խոստանայ : Օր չանցնիր որ պօէրական յաղողութեան վրայ բան մը չլսենք . օր չանցնիր որ Պօէրք երկաթուղիի կամուրջ մը կամ գետի կամուրջ մը չկործանեն, կամ քանի մը Անգլիացի գերի չբռնեն, քանի մը

քսանեակներ անոնցմէ սպաննելէ ետք : Բայց ե՞րբ, արդի՞ւնքը, որ միակ դովելին է : Եւրք, արդիւնքը, վախճանը տարակոյս չեն վերցնելու բնաւ : Անգլիա պիտի յաղթէ Պատմական վճիռն է այս ներկայ պատերազմին, իրերու բնական հետեւանքն է : Անգլիա իր բոլոր մեծ պատերազմներուն մէջ գրէթէ նշանաւոր ձախողութեաներով սկսած է վայելել բախտը : Ներկայէն շատ աւելի սննդաւ տալուր զինուորական կազմակերպութեան մը մէջ իսկ վերջապէս յաղթած է հակառակ դրամական և այլ ահապին և անտանելի զուգուրութեանց : Իր դաղթավայրերուն մէջ ալ գործերը միշտ վարդապոյս գացած չեն անոր համար : Հնդկաստանի գրաւումէն մինչեւ այսօր՝ կուրսերու անընդհատ շարք մը ունեցած է իրեն առջեւ, բայց միշտ ջրին երեսն ի՛նք ելած է : Նաբոլէոնեան պատերազմներուն միջոցին Անգլիա յամառ կառք մը ունէր միայն . քանի մը վարպետ զօրավարներ ալ՝ որք գրէթէ ի չոյցէ ի գոյ ածին զինուորական կուռ ոյժ մը՝ որ խարխափումներէ, թարթափումներէ ետք արիացած, ուռճացած, վերջապէս խաղաղականի մէկ աննշան քարաժայռին վրայ գերի վարեց զինուորական ամենամեծ հսնճարը՝ զոր երբեք տեսած է Եւրոպոյ :

Այս պատերազմին մէջ մանաւանդ Անգլիա ամէն ժամանակէ աւելի զգուշաւորութեան, չրճահայեցութեան պէտք ունի : Ըստ երեւութիւն պօէրական, այլ ըստ էութեան փորիկեան է այս պատերազմ : Անգլիա նշանաւոր հաշիւներ ունի այս կողմոյն մէջ, Գաղթականութեան ուժով վաստակուած գերիշխանութիւն մը զինուորականութեան շնորհիւ կատարելալ իրողութիւն մը ընելու ժամանակն է հիմա Անգլիոյ համար : Անգլիա իր հարիւր տարուան երազն իրականացնելու համար կը կռուի այսօր . փորիկեան միաձոյլ միապաղաղ կայսրութիւն մը հաստատելու Բաբելոնոյ մրկալից Հրուանդանին ծայրէն մինչեւ հիւսիսային ծայրերը Սև Յամաքին՝ որոյ տիրապետութեան ցանկացած են բոլոր մեծ Պետութիւնք, սկսեալ ցամաքատեաց հին Յոյներէն և գաղթասէր Հռոմայեցիէն : Այս երազին սիրոյն համար Անգլիա հարկաւ պիտի ընէ զոհողութիւններ մարդոց ալ, գրամի ալ . ժամանակ պիտի վատնէ . հոգի պիտի հատցնէ, բայց մէկ անգամի մը համար մի-

այն : Գլուխը բաւական ապահովեց , մնացին ոտքերը , որոց փուշերն ահա հանելու կ'ըզբաղի : Անգլիա կ'աշխատի ստեղծել իր ափերիկան կայսրութիւնը , կարելի եղածին չափ հանդարտութիւնը պահպանելով բնիկ և օտարասեռ ժողովրդոց միջեւ որք ներկայ պատերազմին վայրերուն մէջ սփռուած են առատօրէն : Լէտիսմիթ , Մէֆքընկ , Քիւսպրի իրեն համար առանձինն կամ նոյն իակ հաւաքաբար կարեւորութիւն չունին առ այժմ : Ղլխաւորն հիմա անոր համար սա՛ է որ հրդեհի պէս բան մը չբռնկի հարաւային Աֆրիկէի Հոլանտացիներուն և բնիկ ցեղերուն մէջ , որք , մանաւանդ վերջինները , հին հաշիւներ ունին մաքրելու իրեն հետ : Պէշուանները , Զուլուները , Պազուգօները և դեռ ուրիշ ափրիկեան ցեղեր գիտէ՞ք ինչ ոխեր ունին Անգլիոյ մասին : Անգլիա չէ՞ր որ ստիպեց զանոնք իրենց գաղանի բոյներէն դուրս ելնել և մարդ ըլլալ : Անգլիա չէ՞ր որ այդ ցեղերուն երկիրները քիչ շատ բացաւ վաճառականութեան և քաղաքակրթութեան առջեւ : Եւ դիւրին է ենթադրել թէ երբ Անգլիա հոգեով մարմնով նետուի իր սիրական ծովեզերքներէն հեռի՝ Օրանժի և Թրանսվալի մայրաքաղաքներուն վրայ , շատ հաւանական է որ իր ետեւը պիտի տեսնէ իսկոյն ահեղ հրդեհի մը բոցերը , որք ո՛վ գիտէ մինչեւ ո՛ւր պիտի ծաւալին : Հետեւաբար Անգլիոյ քաղաքականութիւնը կը պահանջէ որ քիչ զարնէ , կամաց զարնէ , մէկ զարնէ՝ երկու մտածէ , մինչեւ որ իրերը սովորական դառնան Բարեկուսոյ Հոլանտացիներուն և բնիկ ցեղերուն մտքին մէջ , անոնք ձանձրանան մինչեւ իսկ պօէրական յաջողութեանց և դափնիներուն պարծանքէն , և պատերազմի վիճակն այլեւ դադրի յանկարծական վիճակ մըլլալէ , որպէս զի այն ատեն իր ուղածն ի գործ դնէ : Հարաւ—ափրիկեան անգլ. զօրաց վերին հրամատար Զօր. Պալլըր չէ՞ր կրնար իր 60—70,000 զօրաց բանակովը միահամուռ ձիւնակոյտի մը պէս խոյանալ Պէժուֆոնդայնի և Բրեդրիայի վրայ յաջորդաբար և գրաւել սոյդ երկու մայրաքաղաքները : Ապահովաբար կրնայ , բայց ազգային քաջագործութիւն մը չլացուցիչ պիտի ըլլար միայն բայց ո՛չ բնաւ օգտակար : Եկուր տես որ Անգլիա զինուորական փառքի համար չէ որ կը մղէ այս կռիւ , այլ հաշիւի համար , նոր կայսրութիւն մը ապահովելու համար :

Հիմա տեսնենք թէ անգլի թրանսվալեան պատերազմն ինչ միջազգային կացութիւն ստեղծած է Եւրոպայի մէջ , կամ այս պատերազմին քաղաքական հետեւանքներն ինչ կըրնան ըլլալ Անգլիոյ համար մասնաւորապէս և Եւրոպայի համար ընդհանրապէս : Տեսնենք թէ Միացեալ Նահանգները , որ Քուպայի պատերազմէն ետք ա՛յս երկրորդ անգամ ըլլալով իրենց երկրէն դուրս գործերով կ'ըրաւ ինչ նոր դիրք ձեռք պիտի անցընեն այս պատերազմին հետեւանք :

ԾՈՎԱՄՈՅՆ...

ԱՅՎԱՋՈՎԱԿԻՆ

Ա

Դեկտեմբեր պտըտցուցած է ամէն կողմ իր սարսուռը սառնուտ : Քամին չ'ոռնար միջոցին մէջ , և հեղուկ առաւաններ չե՛ն առկոխուած հոն :

Միապաղաղ ու հանդադրող օդ մը պարզ կային , ահա երբէքն ցուրտ որ աւելի՛ պինդ կը շեշտէ վեհութիւնը Զմեռուան :

Գիշերը կը յառաջանայ միշտ , յորդ մեղաններ պոռթկալով երկինքն ի վար : Անջրպետը ողջոյն կուռ աղջամուղջով մը ծեփուն՝ կը խոկայ համր ու լուռ , ունկնդրելով կարծես ալիքներու այն վէտվէտումը հեշտին որով խաղաղականը կը ննջէ հիմայ իր մրափը ահաւոր :

Գորշ մշուշ մը խաւարին հետ լուծուած՝ անգամ մըն ա՛լ կը սաստկացունէ ծպտումը Միջոցին ուր տեսողութիւնը կը խաթարի , կը հաւկուրի՝ ալ...

Ու երկինք աւելի մուայլ քան ծովը՝ իր մղձնէ գմբէթով կը դամբանէ անհա՛ւ ովկէանը որ կը ծփայ , կը ծփայ...

Խորին անձայնութիւնը որ կը ծանրանայ մթնոլորտին մէջ՝ աստե՛ն աստե՛ն կը պատռտի տարտամ սոյլերով զոր ճամբորդ նաւեր՝ տառամոտա՛ կը կաղկանձեն հեռուներէն :

* * *

Զուրի այս անձիր տարածութեան մէջ ,

հետո՛ւն, բիծեր կը թուին նշմարելի աղօ-
տակի, երկու սե կէտեր որո՛ք իրենց աղ-
կիտին ճղծիմութեամբ կը անտընան Խաղա-
ղականին յաղթ այտին վրայ, իրարմէ մըն-
ներով հետու :

Մղոններով հետո՛ւ . . . : — Աչքի պատ-
րանք : Հազիւ թիզ մը գանոնք իրարմէ կ'ան-
ջատէ :

Մատախուղը կը թանձրանայ երթալով, և,
անտարակերպ վաղկոյի պէս գոյում լինելի-
տեամ՝ ծիւ ծիւ կը թափի վրէ գանդաղու-
թեամբ ու խաւարէն կը խմուի վայրենաբար :

Ո՛չ մէկ ասաց զենիթը որ իր ազամանդ
քթթումը խաւրէ հոս, արուեստական լոյսի
ո՛չ մէկ ծուէն մը անտարբարփակ միջոցին
մէջ՝ որ իր պտղադուն ծիծաղը գայ ծաղկել
արհաւիրքով քաղի այս ծովանկարին վրայ :

Սլիքները կը կնձռին անգուլ խօշ ջրի-
ջրիւքով մը որ միօրինակ և աղու երաժշ-
տութիւն մը կը ձայնօրնէ անհունին մէջ . —
Ահաւոր Օրօրը Խաղաղականին . . . :

* *

. . . Պա՛ւմնմ . . . : Ազգատի ձայն մը կ'աղ-
տանչէ յոնկարծ մթնոլորտը համբուն :

Պայթիւն մըն է խուլ սր կայծակի մը չափ
ընդոստ՝ ոլորտները կը թնդացնէ, ախր ող ա-
հարկու լուսթիւնը վրդովելով ու ջաշի աղօտ
նշայ մը ցաթեցնելով որ մշուշը կը պեղէ :

Կէտերը, երկու ճամբորդ չոզենաւներ,
իրենց յաղթ գնացքին պահուն՝ քիթ քիթի
բաղխած են իրարու . . . :

Այս ուժգին ընդհարումէն՝ մին միւսին
երկաթէ ցուկը պատում՝ գգեանա՛ծ է զայն :

* *

Ու ջուրերը մեղանի պէս և հեղեղատառ
թափով մը թաւայուն՝ ջրուտ գալարումնե-
րով կուգան կոծկոծիլ անընդհատ նաւուն
կողն ի վեր, զայն փցուն խաղալիքի մը նման
ձօճելով :

Հապտապ կ'սկսի սուլել հէք նաւը : Օր-
հասականի պաղատող զոչ մըն է ատիկա,
տխտէր ու հատկաւ, որ զո՛ւր օգնութիւն
կը մուրայ հեղուկ տարածմէնդ ոչ միւս
նաւէն՝ անտարբեր, որ՝ այն ըմբոստ ճակա-
տումէն հրաշքով մը անմկանդու անդրդուե-
լի՝ առ ի շեղ կը դարձունէ իր ցուկը տեն-
դոս փութկոտութեամբ մը :

Ու իբր թէ բան մը չունեցած ըլլար տե-

ղի՝ իր փախուստը կ'արտօրայ հիմայ, ջուրը
ծեծող անիւին վայրագ վրփուրը ծայթբե-
լով յետոյքէն, վերը՝ կայմերուն մէջքին կծիկ,
վարը՝ ջուրին երեսը լիսպիկ մարդերու անի-
ծանքին դէմ կարծես . . . :

Այն թուի գարգմանակը որ նապանքով
իր ծխանէն կ'արտարդիւ հիմայ, կը թուի ըւ-
լալ այլանդակ կապ մը՝ զինքը այս ոճիւրին
զօղող . . . :

* *

Ու վայնասունը որ կը լսուի գեռ արկած-
եաներու խռչափողէն՝ կնիկերու հասանքներ
են որ անդղի վայրեններու պէս կը ճուան
չո՛ւս պիէն, զիւային հանդիւնով մը՝ խո՛ւլ և
աղկապուր . . . :

. . . Հիմայ լոյս ըլլալով բոսոր լապաեր
մը կայ կայսի մը ծայրը Ժրերուն որ կ'առ-
կայծի արիւնստ նայուածքի մը պէս, իր ուր-
ուային ցոլքը սեւեռելով ապշահար՝ նաւուն
բացումը վերքէն ներս խուժող ջուրերուն . . .

Շոգենաւը կը տատանի մղեգնարէն :

Մարտիներու, երկաթէ ձուլերու և կայ-
մերու իրար դարեւուքը կոծ մը կը դառ-
նայ, յուսահատ կառնիչ մը որ խաւնուելով
օգնութիւն հայցողներու աղաղակին՝ կը կող-
մէ նուագ մը դժոխալուր :

Սմէն դէմք ցաւազին պակուցման մը մէջ
պաղած սահմեկած և չուան սանդղակներու
փցուն ոտայինին կասչուն՝ կ'ողորին գեռ
գերմարդկային ճիգերով, սպասելով վայր-
կեանէ վայրկեան անէպցման որ կը մօտենայ,
որ կը մօտենայ . . . :

* *

Ակնթարթի մը պատկեր այս ամէնը սա-
կայն :

Նաւը իր ջախջախ ցուկը մխած է ջու-
րէն ներս, զլխէն նետահար կէտ ձուկի մը
հանգունատուպ որ վիթխարի իրանը դարձ-
միճկելով անդունդն ի վար կ'ընկուզի՝ զար-
հուրելի, զայրազին թափով մը . . . :

Իր սոյլը մարտծ խեղդում՝ է ան . . .

Տա՛նկ . . . տա՛նկ . . . կոշնակի աղիողորմ
զօղանչ մըն է որ կտրուկ կտրուկ կը կող-
կանծի հիմայ միջոցին մէջ, հուսկ մահանուագ
մը կողերըգելով զօղցես :

Եւ, ո՛ւհ . . . երկաթ չղթան դըր երագ
զրգելւնով մը վար կ'իջեցնեն, — իբր վերջին
վրկութիւն վայրաւաւին, — մտածել կուտայ
փայտի և սլարանի այն սիրտ սղոցող աղ-

մուկին որ կ'առթուի մեռելի մը սնտուկ փոս ըջուցած տոնինին :

* *

Ովկէանը իր վիրապերախը լայնարացած է հսկայ նաւուն վիրաւոր :

Բարդ բարդ կոհակներ անդունդներու պէս պեղուած՝ իրենց ծեծկըւութիւն թաց մըռնջիւնը կ'ոռնան անդադրում :

Ու ծովը, հուսկ ուրիմն գիտեղէ վերջ այն շտապոյն ծածանքը դոր խելքէն՝ յուզուած դրօշ մը անդարձ մեկնողի մը դառն դողոջութեամբը կը ծփայ, ընդօրին կուլ կուտայ զայն իր կլափով, տհաքեկող ուժ գնով թեամբ յոր ճանապարհաքելով և ալիքներու ազի լորձուքը թքնելով Պարապին . . . :

* *

ՇՆՃՃ . . .

Խաղաղականը մո'ւշ մո'ւշ կը նրճէ նորէն իր քո'ւնը քառմնաստարուո՛ւ վէտով տուն ալեաց միտքինակ օրօրովը :

Աղմուկները մարած են ալ, ու կոհակներուն խոռովըը հանդարտած :

Հոս ու հոն խելակներ կը ծփան մարդկային փշրանքներու պէս, խեղդուած մարմիններ կ'ամ տակաւին ջուրին հետ յամուտ պայքարողներ որոնք ճիկ շունին ալ, այլ ճիկ մը տխար ու յիմար . . . :

Մահատուներ լուծիւնը կ'ապարի պէս կը ծանրանայ նորէն մեղով ու խաւարով ծրար տուն Միջոցին մէջ : Ծովը իր նախկին կնճիւրը ունի նորէն, խելօք ու միամիտ :

Գիշերը կը յառաջանայ միշտ, ու անձրը պետը հոծ մութով մը տուցուն՝ կը խոկայ հափ ու լուս . . . :

Բ

Խաղաղական :

Լեզի հեղնութեամբ մը չէ՞ որ մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը այս հակասական ծածկանունը տուին Քեզի, Քեզի՝ որուն վիշ-ալքերուն տակ դարերէ՝, անցիլատակ մամանակներէ՝ ի վեր կ'ողբերգուն ճշդկտար եղած կեանքեր, քարդաւիշուր բեկորներ նաւերու, և արի՛ նաւալներու անխճանքը անմուռնչ . . . :

Իսակիւտար

Թէ՛ՆԻԿ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Սիրելի Արմէն,

Գոհութեամբ ստացայ նոյ. 2 թուակիր գրովդ Հանրադիտակիդ վերջին թիւը :

Առաջինն իր նրբազիծ խիտ այլ նշանակելի տողերովը յանկարծ դող հանեց սիրտս, վստահ վիսկայայ որ պարզ աչքով պիտի չը կրնայի քակել միաշար ճանկատուքը, (գիտես արդէն որ մօտէն տկնոց չեմ գործածեր), քանի որ մանուշանդ երկարատեւ լուծեանդ պատճառու տառերդ դիրաւ կարդալու ուսմորութիւնը կորուսեր էի : Բայց այն ինչ տկնարկս նեւտեցի բարդ թերթերուց վրայ, որ տկնարկիս հետ լեզուս ալ սիրաւ սաշիլ չեշտին, թերեւս գրչիդ հրապուրելի հմայքով, և ի վերջէ՝ առատախօսութեանդ հանդէպ բացապանչեցի ինչ որ նմանօրինակ առթով բացադանչեց Պրանսացի վիպասան մը—«Հստոսի սահմանն են որ որոտադին վերէն վար կը թաւալին ի բաց թափելով ամէն թուամբ» : Եւ ստուգիւ չէ կարելի սանձ դնել պերճարան լեզուիդ, երբ այդ լեզուդ բանաշխուհիս խանդով կը թրթռայ և բանաշխուհիս կ'ամ դիւանողիտական եղբայրացութեամբ կը կնքուի :

Սակայն երկրորդն՝ այս է «Հանրադիտակիդ» որ գրէթէ լուրջովին Յօրեւեանի նուիրում է, իմաստասիրական սահմանն անցնելով ներբողականին ամպերուն մէջ կը սաւառնի և կերպով մը յորեղեարն իր պատկերին պէս անճանաչելի կը դառնայ : Բնու չեմ զարմանար, եթէ յորեղեանիս առթիւ, «Հանրադիտակին» ու հրապարակային համակրական համերդին ձայնակից գանուելու իղձով բամբային չեշտ մը տուած է, քաջ գիտնալով որ բարեկամական անկեղծ սիրդ առ իս պիտի ստուարացնէ արժանիքս քու աչքիդ առջեւ, և պարտ է բոլոր որ ուրիշներ ալ, ազնիւ հոգիներ, չափաւորութեան չաւղէն խոտորած էին, հանդիսական խանդավառութենէ մղուելով :

Բայց և այնպէս, սիրելի Արմէն, ինչպէս այլ թերթերու հրապարակաւ, մասնաւորապէս «Հանրադիտակիդ» ալ իմ սրտողին չը նորհակալիքս կ'ուղղեմ այն սիրալիր ու զնահատելի զգացմանց համար՝ որով ղեզուեն է

սիրտդ, և յատկապէս կը խնդրեմ որ յորեք-
եարի մասին ներքողական եղանակը չարու-
նակելու տեղ, փոյթ տանէիր «Հանրագիտա-
կ» յարատեւութեան ու յաջողութեան պայ-
մաններն ապահովել և՛ ինչպէս համոզուած
եմ, քու սուր ու ընտիր գրչով ու իմացական
ծանօթ կարողութեամբ ձեռնադրու գտնուիլ
հանրային լուսաւորութեան գործին, լուրջ
ու օգտաշատ յօդուածներ հրատարակելով
և այս ուղղութեամբ հետեւած պիտի լինիք
«Հանրագիտակ»ի նշանաբանին, որ է հան-
րօգուտ գիտութիւն սփռել

Սիրով և յարգանքով, միամի,
Իշխիր 20 Նոյ. 99 Սիրելի Արմէն
Քոյդ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱՐԱՆ

Յառաջդիմութիւն բառը կը նշանակէ յա-
ւաքով, յաւաք ելնել, սովորաբար դէպի
բարին: Աւանդամուտքիւնն յառաջդիմութեան
հակառակն է, այսինքն լաւ մը միշտ միւս-
նոյն կերպով ընելու սովորութիւնն է: առանց
փոյթ ընելու թէ նպատակին հասնելու հա-
մար կա՞յ աւելի շահաւէտ եղանակ մը: Հին
ժամանակները, մարդիկ ցորենը կ'աղային
քարի վրայ, գլանածեւ ուրիշ քարի մը միջո-
ցաւ: Անտարակոյ շատ դանդաղ գործողու-
թիւն մ'էր այս ցորենն աղէկ չէր ճմուռեր
և ալիւրն ալ խոշոր կ'ըլլար: Յետոյ Հռոմայե-
ցիք սկսան դործածել տեսակ մը կաղամած,
կամ աղօրիք, զոր ձի մը, եղ մը կամ էջ մը
կը դարձնէր: Այս կերպով աղացման գոր-
ծողութիւնը շուտ կը կատարուէր, ալիւրը
լաւ կ'աղացուէր և բնականաբար հացն ալ
լաւագոյն կ'ըլլար: Բայց ձիերը, եղներն ու
էջերը բազմաձախ են, կը յոգնին և մոռնոյ
կ'սպառեն: Ուրեմն մարդիկ փնտռեցին թէ
կրնային բնական գործիչներ դնել անոնց տեղ,
օրինակի համար, ջուրը, հովը, որք ձիի են,
չեն յոգնիր, և չեն ուտեր կամ սպառեր:
Ուստի ջրաղացներն ու հողմաղացներն հնար-

ուեցան: Ասոնք աւելի շուտ կը դործէին քան
իրենց նախորդները, և լաւ կը կատարէին ի-
րենց պաշտօնը: Հռոմայեցւոց կազմածն յա-
ռաջդիմութիւն մ'էր ձեռնաղացին վրայ, ջրա-
ղացն ու հողմաղացն ալ յառաջդիմութիւն
մ'էին ձիու միջոցաւ դարձող աղօրիքին վրայ:
Ինչ պիտի ըսէիք այն մարդուն համար, որ մեր
օրով յամառութեամբ ուղէր իր ցորենն աղալ
ձեռնաղացով, քանի որ կրնար լաւագոյն եւ
աժան կերպով աղալ տալ ջրաղացի մը, հող-
մաղացի մը կամ շոգեշարժ ջրաղացի մը: Պի-
տի ըսէիք թէ այդ մարդն աւանդաւոր մ'է:
Արդ, դեռ այսօր շատ մարդիկ ճիշտ այդ ա-
ւանդամուտ մարդուն պէս կ'ընեն: Ամէն ար-
ուեստներու մէջ ալ աւանդամուտներ կան:

Աւանդամուտութեան դէմ յառաջդիմու-
թեան մղած պայքարին օրինակ կրնայ ըլլալ
գետնախնձորին (բալթաթէս) սլաւոնութիւնը:
Ֆրանսացիք չէին ճանչնար այդ օգտաշատ
բոյսը: Կեղրոնական Ամերիկայէ բերուած է
յեւրոպա, Սպանիացւոց ձեռամբ, 16րդ դա-
րուն մէջ: Գետնախնձորը տարածուեցաւ Հո-
լանտայի, Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ, բայց
Ֆրանսայի մէջ աւանդամուտները միաբանեցան
գետնախնձորին դէմ, և մինչեւ իսկ ըսին թէ
ուտողը բորոտութեամբ կը վարակուէր: Հե-
տեւապէս, թէեւ Ֆրանսայի մէջ կը մշակ-
ուէր և իբրեւ սնունդ կը տրուէր անասուն-
ներուն, 200 տարի ետքը միայն ծառայեց
մարդուն սննդաուութեան: Եւ այս երկու հա-
րիւր տարուան մէջ 4—5 անգամ սով ծագե-
ցաւ ի Ֆրանսոյ, վասն զի ցորենը կը պակսէր
և չէին համարձակիր գետնախնձորով սնունդը:
Գիտնական տարրապէտ մը, որ միանգա-
մայն նշանաւոր հողագէտ մ'էր, Բարմանդիէ,
ուղեց դարման տանիլ իրաց այս ցաւալի վի-
ճակին: Չեռնարկեց փարատել այն նախա-
պաշարումները զորս տգիտութիւնը կը տարա-
ծէր այս թանկագին հացաբոյսին դէմ:
Ստուար հատոր մը սկսեց է, պտտմելու հա-
մար ինչ որ Բարմանդիէ բրաւ ու գրեց այս
արդիւնքը ձեռք բերելէ առաջ: Աւանդամու-
տները կը ծաղրէին. մեծ աւատալեաններն ու
իրենց տիկինները կը խնդային այս պարզամիտին
խմբութեան վրայ: Սակայն օր մը, Լուդովի-
կոս 23. համարձակեցաւ իր լամբակին (օղակ)
անցընել գետնախնձորի ծաղիկներէն շինուած
փնջիկ մը, զոր Բարմանդիէ ընծայած էր:
Քիչ ժամանակ վերջը, ճաշ մը սրուեցաւ

րուն ներկայ կը գտնուէին Ֆրանքլին և Նա-
վուազիէ : Այս ճաշ կը բաղլանար լոկ գետ-
նախնձորէ պատրաստուած : Կերակուրներով :
Վերջապէս աւանդամուկութիւնն յաղթուեցաւ,
և այսօր Բարմանդիէի անունը կը յիշուի իբրև
Ֆրանսայի արտադրած ամէնէն օգտակար մար-
դոցմէ մին : Կեր ամէն գործերուն մէջ պէտք
է փնտռել յառաջդիմութիւնը, այսինքն կատա-
րելութիւնը : Պէտք է փնտռել զայն մանաւանդ
երկրագործութեան մէջ : Վասն զի երկրագոր-
ծութիւնն որ հասկոյն աշխարհ կը սնուցանէ :
ճարտարագործութեան ամէնէն օգտակարն
է : Երկրագործութիւնը շատ
զիւրկն գործ է : Եւ թէ անորեւ համար, կը
բաւէ ձեռքը և ոտը : Եւ անոր հոգային աշ-
խատութիւններով :

Երկրագործութիւնը կամ հողագործու-
թիւնն ամբողջութիւնն է այն բոլոր կանոն-
ներուն որոց պէտք է հետեւիլ, մարդու և
ընտանի անասուններուն ապրուստին անհրա-
ժեշտ եղած բոլոր բերքերը հողէն առնելու
համար : Գիտնականներ ձգնած են այս կա-
նոններն ի վեր հանել, և կրնանք ըսել թէ
չատ կարելոր կանոններ գտած են, զորս ա-
սպացուցած են փորձառութեամբ :

Յառաջդիմութիւնը երկրագործութեան մէջ

Իբր վաթսուն տարի առաջ, դեռ գրեթէ
ամէն տեղ ընդունուած էր որ բոյսերն ի-
րենց սնունդը կը քաղեն լոկ ֆոսֆորանոս-
ֆէթէ, այսինքն անասուններուն կամ բոյ-
սերուն բեկորներէն, կամ նեխած արտա-
դրութիւններէն, ինչպէս կոյսջուրը, անասնոց
աղբերը, չորցած արիւնն ու միսը, փտած
կամ տարրալուծուած չարդն ու եղէգները
ևն : Աղբը նկատուած էր իբրեւ գերազանց
պարարտութիւն, և կը կրկնուէր, իբրեւ հա-
ւատոյ դաւանութիւն, թէ «Ասանց ալբէ չէ
հողագործութիւն» :

Բայց քիմիագէտները գտան թէ սնաս-
նական կամ բուսական բեկորները, մեծ մա-
սամբ, իրենց արգասաւորիչ յատկութիւնները
կը պարտին հանրայն կամ անֆոսֆորանոս-
տարրներուն, և ապացուցին զայս փորձերով,
մանաւանդ հետեւեալ փորձով :

Փորձ 2. — Փշրուած ապակիով լի երկու
թաղարներու մէջ քանի մը ցորեն ցանեցին,
իւրաքանչիւր թաղարի մէջ հաւասար թուով :

Բայց մինչ թիւ 1 թաղարը լոկ ջրով կ'ու-
ռոգուէր, թիւ 2 թաղարը կ'ուռոգուէր այն-
պիսի ջրով մը որոյ մէջ լուծած (հալեցու-
ցած) էին աղբին մէջ գտնուած հանքային
նիւթերէն մաս մը, ինչպէս կիր, բօդաս,
փոսֆոր, եւայլն :

Թիւ 1 թաղարին մէջ, հունձքը շատ փայ-
լուն շեղաւ, քանի որ լոկ ջրով և փշրուած
ապակիով սնած էր : Սակայն ցորենը բուսած
էր, վասն զի բոլոր բոյսերն ալ իրենց սնուն-
դին մէկ փոքր մասը կը քաղեն օդէն և
ջուրէն : Իսկ թիւ 2 թաղարին մէջ, որ հան-
քային նիւթեր պարունակող ջրով ոռոգուած
էր, հունձքը շատ աւելի գեղեցիկ եղաւ :

Տարբերութիւնն ո՞ւսկից յառաջ կուգար
այս երկու մշակութեանց միջեւ, քանի որ
երկուքն ալ ամուկ նիւթի մը, փշրուած ա-
պակիի մէջ կատարուած էին : Տարբերու-
թիւնն անտարակոյս յառաջ կուգար թիւ 2
թաղարին ոռոգման համար գործածուած
հանքային նիւթերէն : Ուրեմն այս նիւթերն
արգասաւորիչ մեծ գորութիւն մը ունին :

Այս պարզ օրինակէն կ'ընդունէք թէ հո-
ղագործութիւնը մեծ յառաջդիմութիւններ
ըրած է, քանի որ զիտէ թէ արգասաւորու-
թեան տարրներ կրնայ գտնել այլուր քան
աղբի մէջ, որոյ քանակութիւնը միշտ սահ-
մանափակ է, մինչդեռ մարդս գրեթէ կըր-
նայ անսահման քանակութեամբ ձեռք բե-
րել հանքային մարմիններէ փոխ առնուած
արգասաւորիչ նոր նիւթեր :

Սովորական լեզուի մէջ կ'ըսենք, օրինա-
կի համար, թէ կենդանի էակները (անաս-
ունք և բուսեղէնք) կը ծնին, կ'աճին, կը
մեծնան, կը մեռնին, կ'այրին, կը նեխին,
կ'ոչնչանան :

Սակայն իրասպէս, ո՛չ բան մը կը կորսուի
եւ ո՛չ բան մը կ'ստեղծուի բնութեան մէջ :
Այս սկզբունքը, զոր Ֆրանսացի նշանաւոր
տարրագէտ Լավուազիէ բանաձեւած է, կըր-
նանք ըսել թէ արդի տարրաբանութեան հի-
մը կը կազմէ : Օրինակի համար, երբ բոյս մը
այրենք, անոր մէկ մասը մոխիր կը դառնայ
հատաւորուն վիճակի մէջ, միւս մասը կը ցըն-
դի մթնոլորտին մէջ, կազային վիճակի մէջ :
Բան մը չի կորսուիր. այրած բոյսին ոչ մէկ
հիւլէն կամ շամանդաղը կորսուած է : Այն
գործողութիւն, որով մարմին մը իր տարր-

ներուն կը վերածուի, կը կոչուի տարրալուծութիւն (analyse): Իսկ հակառակ գործողութիւնն, որով շատ մը պարզ տարրներ իրարու կը միանան՝ բաղադրեալ կամ բարդ մարմին մը կազմելու համար, կը կոչուի համադրութիւն (synthèse): Մարմիններն որքան դաւաճար կը փոխուին կամ իրենց ձեւը կը փոխեն մեր աչաց առջեւ, տարրալուծութեան և համադրութեան օրինակներ կը հայթայթեն մեզ շարունակ:

ՊԱՐԶ ՄԱՐՄԻՆՆԵՐ. — Այն ամէն մարմին զոր չենք կրնար տարրալուծել քիմիական տարրալուծմամբ, կը կոչուի տարր կամ պարզ մարմին: Պարզ մարմինները մետաղ (métal) կամ մետաղակերպ (métalloïdes) են: Մետաղակերպ կը կոչուին անոնք որ մետաղներուն սեփական փայլէն զուրկ են: Երկաթը, ոսկին, արծաթը մետաղ են: Ծծումբը հաստատուն մետաղակերպ մ'է: Թթուածինը, ջրածինը, բորակածինը կազային մետաղակերպներ են:

ԹԹՈՒԱՄԻՆ (Oxygène). — Թթուածինը բոլոր պարզ մարմիններուն մէջ ամէնէն կարեւորն է: Զուրին բաղադրութեան երրորդ մասը և մթնոլորտային օդին հինգերորդ մասը կը կազմէ: Թթուածինը չի բորբոքի՝ կ'ըսուի թէ այրելի կամ կիզակալն է. բայց անհրաժեշտ է միւս մարմիններուն այրելուն: Այրեցիկ (Comburent) կազ մ'է:

Մետաղակերպի մը հետ միանալով, թթուածինը սովորաբար կը կազմէ թթու մը (Acide): Այսպէս կրնանք ունենալ.

Թթուածին + փոսփոր = փոսփորային թթու (Acide phosphorique):

Թթուածին + ծծումբ = ծծմբային թթու (Acide sulfurique):

Թթուածին + ածուխ (զուտ) = ածխային թթու (Acide carbonique):

ԶՐԱՄԻՆ (Hydrogène). — Այս կազը բոլոր ծանօթ մարմիններուն մէջ ամէնէն թեթեւն է: Գիւրաբորբոք և կիզական ըլլալով, կրնայ արագաբար բորբոքել և մինչև իսկ կրնայ պայթում մը յառաջ բերել երբ թթուածինի հանդիպի: Մեր խմած ջուրը թթուածինի և ջրածինի բաղադրութիւն մ'է, որոյ մէջ ջրածին կայ երկու երրորդ համեմատութեամբ, այսինքն ջուրին մէկ մասը թթուածին է և երկու մասը ջրածին:

ԲՈՐԱԿԱԾԻՆ (Azote). — Բորակածինը կազ

մ'է որ մթնոլորտային օդին չորս հինգերորդ մասը կը կազմէ: Բորակածինը կը գտնենք շնչաւորներու միւտերուն, և բոյսերու հիւսուածներուն մէջ: Կ'ըսուի թէ այս կազ ո'չ այրելի է և ո'չ ալ այրեցիկ: Սակայն բորակածին պարունակող մարմինները փտելու ընդունակ են, այսինքն յամրաբար այրուելու, որովհետև փտումը ինքնին այրում մ'է:

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ. — Բաղադրեալ մարմինները կազմուած են պարզ մարմիններու բաղադրութեամբ: Ածխային թթու, բոգասը, կիրք բաղադրեալ մարմիններ են:

(Շարունակելի)

ՀԱՅՈՒՅԻՔ ԵՒ ԿՈՒՍԱՍՏԱՆՔ

ՊԱՐԶԵՐԿԱՐԱ

Կիլիկիոյ թեմերուն մէջ ևս ունեցած ենք Կուսաստաններ: Ասոնք թէև յանուանէ չեն յիշուած, չեն արձանագրուած, բայց ցարդ պահուած աւանդութիւնք կը հաւաստեն թէ երբ Հեթումի Գրադարկ առանձնացաւ, իր քոյրն ալ այդ վանքին մօտերը հիմնեց Կուսաստան մը, որոյ աւերակները կ'տեսնուին ցարդ:

Սոյ հիւսիսային արեւելեան կողմը, չուրջ մէկ ժամ հեռու գտնուած դաշտավայրին մէջ է այդ նուիրական տեղը, ուր Ս. Կիրակոսի անուամբ մատուռ մը կայ: Ամէն տարի, Մայիս ամսոյ մէջ Սսեցի բազմաթիւ ուխտաւորուհիք ուխտադնացութիւն կը կատարեն հոն: Այս առթիւ Սսեցի հաւատաւորուհի մ'ալ կ'երթայ հոն, և ուխտաւորաց մոմ ծախելով, հասոյթը Մայրավանքին կը յանձնէ:

* * *

Նոյնպէս, Անաւարդայի բերդին միակտուր քարածայոն ունի փորուած խոռոչ մը որ փոքրիկ այր մը կը կազմէ: Այդ քարածայոնին վրայ քանդակուած է Կուսերավոր մը թափորը: Ըստ աւանդութեան, բերդին պաշարման ժամանակ, քաղաքին տոհմային կոստ

ամենաբարձր դասու կոյսերն այդ տեղ ապաստանած և ամիսներով ճգնած են . յետոյ այդ կայան՝ կոյսերու առանձնարան մը եղած է :

* *

Ուշիոյ Ս. Ամենաիրկիչ Մենաստանին մօտակայքը , ցամաքած հեղեղատի մը կողերուն վրայ դեռ կ'երեւի փոքրիկ աւերակոյտ մը՝ Ս. Կատարինէի վանք անուամբ , ո՛ւր մինչև հիմա ուխտի կ'երթան ի մասնաւորի Հայ Կուսանք :

Աւանդութիւն մը կայ թէ Ս. Ստեփաննոս Ուշեցոյն նահատակութեան վրայ քանի մը Հայ—կուսանք ուխտած են կուսակրօնութիւն , եւ եկած հաստատած են այդ փոքրիկ Մենաստանը , որ իրենց վկայուհի պետին անուամբ կոչուած է Ս. Կատարինէի Կուսաստան—վանք :

Որչափ կը յիշեմ Մարաշի մէջ ալ կը դռնուի Ս. Կատարինէ անուն աղբիւր մը որ կը բղխի արեւելեան կողմի թագսառաքով (*) լերան ստորոտէն :

* *

Ներսէս Լամբրոնացոյն ընտանեաց պատմութենէն կը տեսնենք թէ Լամբրոնացոյն մայրը՝ Շահանդուխտ՝ (Ներսէս Շնորհաւոյն եղբօր դուստրը) եւ երկու քոյրերը՝ Լամբրոնացիին ձեռքէն ընդունած են իրենց վանական մասնաւոր սքեմը , և այս մասին Կիլիկեցոց համար գրուած Թուղթերու (Կոն. դալ) լուսանցքին վրայ կը կարդացուին ճշգնաւոր կուսանաց նկատմամբ հետեւեալ տողերը .

«Ճամբորտութեան ճանապարհին անմոլար ընթացող , սիրող ֆրիստոսի և ատեցող աշխարհի , սնեալ սրբութեամբ և զարգարեալ անարատութեամբ , սուրբ ճղնաւոր և խաչակրօն աշխատաւոր , բարեպաշտի եւ մեծահարկի կուսի . . . »

* *

Հապա Սկեւոյ կուսաստանը , ուր երբեմն տասնեւութ կոյսեր , երեքտասան տալի աշխատելով , տաճարին դուզնադիւտ վարագոյրն ընդեւուզած են , որ ամբողջ դարեր թէեւ անվթար պահուած , սակայն վերջերս անհետացած է :

(*) Թագսառաք՝ աղաւաղեալն է «Թագէտս Առաքելոյն» :

Նոյնպէս , Փայասի մէջ ալ կը յիշուի Կուսանաց կամ Աղջկանց Բերդ (Կուսանոց) , Հովուաց Բերդին մօտ :

* *

Ժամանակակից պատմութեան հետ խառնուած են Կիլիկիոյ տոհմականաց եւ տոհմականուհեաց կրօնաւորելու ու վանք մեկուսանալու եղանակը , եւ անոնց վարքագրութիւնը :

Ժ.Գրդ դարուն մէջ Զապէլ , Ռուբէնի եւ Փրիլպի հարսնախօսութիւններէն զրկուելէ ետք , նախամեծար համարեց վանք մը առանձնանալ ի Սելեւկիա : Սակայն ծիրանածին կոյսը տասն եւ մէկ տարեկան էր , երբ ամուսնացաւ Հեթումի հետ , բայց այնպիսի կեանք մը ունեցաւ , որ իր ժամանակակից պատմաւորներն ու գրիչները մաքուր և սուրբ կը համարին զայն , զի իր անձը բոլորովին նուիրած էր առաքինութեան և բարեգործութեան :

Հին ամուսնական կեանքին վրայ տեղեկութիւն ունեցողները միայն կրնան հասկնալ մեր գրածը , ինչպէս նաեւ անոնք որ կարդացած են հոգեւոյս Տ.Գարեգին եպիսկոպոս Սրբանձատեանցի գրած քառասուն զաւակ ունեցող վանեցի քահանային պատմութիւնը :

* *

Զապէլ , բաղմաթիւ զաւակաց մայր ըլլալով հանդերձ , իր ամէն պարտքերն ու պարտաւորութիւնները կատարելէ վերջ , երբ մինակ ըլլար , իր ապարանքին մէջ կը ձգնէր , կ'աղօթէր ու ծով կը պահէր : Եւ ստուգիւ Զապէլ այնչափ եկեղեցասէր էր , որ շատ անգամ զուխը քողով ծածկած՝ կ'երթար հեռաւոր ուխտատեղիներ , և վանքերու դրան մօտ կենալով՝ ընդ երկար կ'աղօթէր , կը փառաբանէր , առանց նայելու ձմրան խոտաշունչ ցուրտին եւ ամրան տօթագին եղանակին : Զապէլ միանձնուհիներու պէս իր ձեռքով կը դարմանէր աղքատիկ ու անտէր հիւանդները ի Սիս իւրակերտ Հիւանդանոցին մէջ , ուր շատ անգամ կը յաճախէր :

* *

Երուսաղէմ եւ չրջակայքն իրբեմն Կիլիկիոյ թեմերն էին : Սմբատ Գունդստապլի տարեգրութեան մէջ կը կարդանք թէ 1181ին Ռուբէն անուն մէկը բաղում ծախքով Երուսաղէմ դացած եւ Մեռեալ Շովուն մօտ Բե-

րէկ ըստած գիւղէն նշանաւոր աղջկան մը հետ ամուսնացած է : Ի Քերէկ, ուր արդէն Ս. Գէորգ անուն եկեղեցի ունեցած էինք, ի յիշատակ Զապէի 1257ին Ս. Յակոբ անուն եկեղեցի մը(*) շինել տուած է իւր ամուսինը՝ Հեթում, որ իւր սրբակենցաղ կողակցէն աւելի առաջ երթալով, Եղբայր—Մակար անունն առաւ եւ կրօնաւոր եղաւ :

Ասոնց զուտորը Ֆիմի կամ Եւփիմէ եւս ամէն բան թողուց եւ մենակեաց կեանքն ընտրեց : Ֆիմի հանգչած է յերուսաղէմ, Ս. Յակոբայ գաւիթը՝ ձախակողմեան սիւնի հիւսիսային կողմը :

Ի վերջոյ, կրնանք ծանօթագրել նաեւ Լամբրոնի աղջիկը՝ Կիռ-Աննան, որ բազմաթիւ զաւակներ ծնանելէ յետոյ, կուսանաց վանքը քաշուեցաւ, ինչպէս չարարաստիկ Լեւոնի աղջիկը՝ Փինա, որ իր հօր հետ յերուսաղէմ գացած էր, չուղեց իր հօր ընկերանալ գէպի Արեւմուտք, այլ փափաքեցաւ մընալ Ս. Տեղեաց մէջ, ուր աղօթիւք եւ պահօք կնքեց ու վերջացուց իւր Սաղիմական կեանքը, եւ մարմինն ամփոփուեցաւ հոն, յատուկ դամբարանի մը մէջ :

Ա. Յ. ԱՅԿԱՋԵԱՆ

(*) Արեւելքի Սաղիմական ծանօթ թղթակցին՝ Վրոյրի գրած հետեւեալ տողերն, աստ արժան կը համարինք արտատպել.

«Երկրպի մօտ «Փորձութեան լերան» վրայ կը բնակին եղեր, ժամանակին, բազմաթիւ միայնակեացներ քարայրներու մէջ, որ տակաւին կ'երեւան, նոյնպէս եւ եօթն միանձնուհիներ առանձին խցիկներու մէջ, որ յետոյ իրենց գերեզմաններն եղած են :

«Միանձնուհիներու այդ խցիկները բնական քարանձաւներ են : Իսկ քարանձաւը ուր Որդին Աստուծոյ անցուց քառասնորեայ պահեցողութեամբ, այսօր Յոյներու սեփական մատուռ մ'է, 1874 թուականէն ի վեր :»

Փափաքելի էր որ Քերէկի վրայ ալ թիջ մը տեղեկութիւն պրպտէր Արեւելքի Վրոյրը, ուր պիտի գտնէր ուսումնասիրութեան արժանի բաւական հում նիւթեր :

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒՐՈՊԵՈՅ

ՆԱԲՈՒԼՆԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Եւրոպիոյ ժամանակակից պատմութիւնը կ'սկսի եւրոպական մեծ գէպքով մը, այն է՝ պարտութեամբ Նարուէն Պոնաւարդի, որ եւրոպական մեծ ու փոքր բոլոր պետութիւններն հարուածած էր, անոնց ներքին կազմակերպութիւններն յեղաշրջելով, կամ արտաքին յարաբերութիւնները փոփոխելով :

Նաբուէն, ուղղակի կամ անուղղակի, իր ազդեցութիւնն զգալի կ'ընէր Եւրոպիոյ բոլոր ազգերուն : Ուղղակի կ'իշխէր Ֆրանսական Կայսրութեան վրայ, որ իր մէջ կը բովանդակէր ո'չ միայն նախկին Ֆրանսան և Ա. Հանրապետութեան գրաւած երկիրները (Պելժիա և Հոենոսի նահանգները), այլև Զուլիցերիոյ քանի մը մասերը, Իտալիոյ երրորդ մասը, Հոլանտան, Հիւսիսային Գոմուն եկեղքը գտնուած գերմանական նահանգները, ևլն : Այս բոլոր երկիրներուն վրայ հաստատած էր գինուորական և բացարձակ կառավարութիւն մը : Անուղղակի կ'իշխէր նաեւ դրացի պետութեանց վրայ, որոց հետ կնքած էր յարձակողական և պաշտպանողական դաշնագիրներ : Այդ պետութիւններն էին Սպանիոյ, Նաբուլիի, Իտալիոյ, Վէնցիաիոյ թագաւորութիւնները զորս տուած էր իր ազգականներուն, Հոենոսի Դաշնակցութեամբ միացած Դերման նահանգները, Զուլիցերիոյ, Դանիա (Տանըմարքա) ևլն : — 1812ին մինչեւ իսկ Դերմանական երկու անկախ միապետութիւնները (Աւստրիա և Բրուսիա) բռնադատած էր իրեն հետ միանալու Ռուսիոյ դէմ : Իր իշխանութեան և ազդեցութեան շրջանակէն դուրս կը մնային միայն Եւրոպիոյ ծայրերը, Անգլիա, Ռուսիա, Շուէտ, Սիկիլիա, Բորգուկալ և Սպանիա, որոց ամենքն ալ պատերազմական վիճակի մէջ էին իրեն դէմ Այսպէս ամբողջ Եւրոպա երկու բանակի բաժնուած էր. Նաբուէն և իր թշնամիք :

Սակայն Նաբուէնի պարտութիւնն Եւրոպիոյ բոլոր հողային կազմակերպութիւնն յեղաշրջեց : 1813ին, Աւստրիա և Բրուսիա գաղութեան Նաբուէնէ, և անոր թշնամիներուն

հետ միացան : Այսպէս կազմակերպւեցաւ չորս մեծ տէրութեանց դաշնակցութիւնը , որք պաշտօնապէս Դաշնակիցք (Alliés) կը կոչուէին (Անգլիա, Ռուսիա, Աւստրիա եւ Ֆրանսիա) : Այս չորս տէրութիւնք պատերազմին ուղղութիւնն իրենց ձեռքն առին , եւ իրենց ցինակցութեան հետ միացուցին նաեւ Գերման պետութիւններն ու Իտալիոյ դահագուրկ վեհապետները : Դաշնակիցք իրենց ուժերը պարբերաբար համախմբեցին Նաբոլէոնի բանակին դէմ , ի Սաքսոնիա : Լայրցիկի ճակատամարտը մէկ հարուածով դաշնակիցներուն տուաւ բովանդակ Գերմանիան : Այն ատեն Նաբոլէոնի առաջարկուեցաւ Ֆրանսան , իր 1800ի սահմաններով : Նաբոլէոն չընդունեց : Դաշնակից Տէրութեանց զորաբանակները Ֆրանսա արշաւեցին , եւ այն ատեն Նաբոլէոնի առաջարկեցին միայն 1790ի սահմանները : Նաբոլէոն դարձեալ չընդունեց : Դաշնակիցք վերջապէս առին զԲարիզ եւ որոշեցին գահընկէց ընել զՆաբոլէոն (1814) :

1790էն ի վեր Ֆրանսայի կցուած բոլոր երկիրները , եւ Նաբոլէոնի կազմակերպած պետութեանց բոլոր հողերն այն ատեն առանց վեհապետի մնացին : Դաշնակիցք , որք Եւրոպիոյ տէր եղած էին , իրենք ստանձնեցին անոնց ճակատագիրը կարգադրելու գործը : Ֆրանսայէ մեկնելէ առաջ , որոշեցին Վիեննայի մէջ Վեհաժողով մը գումարել , որուն պիտի մասնակցէին երկուստեք պատերազմին մասնակցող բոլոր տէրութիւնները : Ուրեմն Եւրոպիոյ բոլոր պետութիւնները Վեհաժողովի հրաւիրուած էին : Բայց դաշնակիցք ծածուկ յոգուածով մը իրենց վերապահած էին որոշել այն հիմերն որոց համեմատ պիտի կարգադրուէին Ֆրանսայի թողած երկիրներուն վիճակն եւ անոնց փոխադարձ յարաբերութիւնները , աստի յառաջ պիտի դար տեւական հաւասարակշռութեան դրութիւն մը , ուստի բաժանման յատակագիծն յորինեցին իրենց ուղածին պէս : Այլեւ Վեհաժողովին ուրիշ բան չմնաց ընել , բայց եթէ չորս մեծ տէրութեանց միջեւ որոշուած հիմերուն վրայ կարգադրութիւն մ'ընել , այսինքն՝ դաշնակից տէրութեանց որոշումները պարզապէս արձանագրել (1814 Մայիս 30ի դաշնագիրը) :

ՎԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ

Եւրոպիոյ բոլոր տէրութիւնները մասնակ-

ցած էին պատերազմին . ուստի ամենքն ալ լիազօրներ զրիւցին Վիեննա , որոց թիւը կը հասնէր 143ի : Պատերազմական երկար շրջանէ մը վերջ , այսքան բազմաթիւ զիւանադէտներու գումարումը բացառիկ ոգեւորութիւն մը տուաւ Վիեննայի : Աւստրիական կառավարութիւնը պարատակամներէ յատուկ յանձնաժողով մը կազմած էր , լանկութիւնն հաճոյալի ընծայելու համար իր հիւրերուն : Ժամանակն անցաւ զբօսանքներով , երեկոյթներով եւ հանդէսներով :

Դաշնակիցք , Վեհաժողովոյ պաշտօնական բացումը քանիցս յետաձգելէ վերջ , ծանուցին թէ պաշտօնական բացումը Նոյմբ. 1ին տեղի պիտի ունենար : Բայց Վեհաժողովի երբեք չբացուեցաւ : Վեհաժողով տեղի չունեցաւ , այլ լիազօրներու մասնակի յանձնաժողովներ գումարուեցան , եւ պետութեանց միջեւ մասնաւոր դաշնագրեր ստորագրեցին : Յետոյ այս բոլոր դաշնագրերը միացուեցան միակ դաշնագրի մը մէջ , որ կոչուեցաւ «Վիեննայի Վեհաժողովին վերջնական դաշնագիրը» (1815 Յունիս 9) :

Եթէ տէրութիւններն իրենք առանձինն կարգադրեցին Եւրոպիոյ կազմակերպութիւնը եւ իրենց որոշումներն ընդունել տուին միւս պետութիւններուն : Զորս դաշնակիցներն առդէն Մայիսէն ի վեր որոշած էին կարգադրութեան գլխաւոր սկզբունքները : Բաշխուելի երկիրներն էին Ֆրանսայէ եւ Նաբոլէոնի հաստատած պետութիւններէն առնուած հողերը (Պելժիա , Հոլանտա , Շուեյնսի ձախ եւ Վերքը , Իտալիա , Գերմանիա , Վարչաւիոյ մեծ — զքսութիւնը) : Դաշնակիցք ինչ ինչ հոյերու բաժանման վրայ համաձայնած եւ ոմանց վրայ ալ անհամաձայն էին : Մայիս 30ին կարգադրեցին մէծի նիւթ չեղող խընդիրները (Իտալիա , Պելժիա եւ Շուեյնսի ձախ եղրը) , իսկ միւսները (Գերմանիա եւ Բոլոնիա) վերապահեցին , Վիեննայի մէջ կարգադրելու համար :

Վիեննայի մէջ , չորս դաշնակից տէրութեանց լիազօրներն որոշեցին նախ իրենց միջեւ համաձայնիլ վերապահուած խնդիրներու վրայ , բայց միանգամայն քաղաքականութեամբ Ֆրանսայի եւ Ապանիոյ ներկայացուցչներն ալ հրաւիրեցին ներկայ գտնուելու խորհրդակցութեանց : Ֆրանսական ներկայացուցիչ Թալէյրանի խօսքին նայելով

ահա ի՛նչպէս տեղի ունեցաւ առաջին խորհրդակցութիւնը: Անգլիացի լիազօրը կ'ըսէ թալէրանի. — «Այս դումարման նպատակն է Ձեզ ծանօթացնել ինչ որ չորս արքունիքներն ըրին յորմէ յետէ հոս ենք»: Ատենադրութիւնն (procès—verbal) հաղորդուեցաւ թալէրանի: Զորս տէրութիւնք անոր մէջ դաշնակից անունը կուտային իրենց: Թալէրան բողոքեց այս բացատրութեան դէմ, որ զՖրանսա դուրս կը նետէր եւրոպական մեծ տէրութեանց միութենէն: Ֆրանսացի լիազօրը պահանջեց վեհաժողովոյ բացումը, դաշնակիցներուն խոստման համաձայն, ինչպէս նաեւ յանձնաժողովոյ մը կազմութիւնը, պատրաստելու համար այն խնդիրները զորս վեհաժողովը միայն իշխանութիւն ունէր որոշելու: Իր քաղաքականութիւնն էր փոքր պետութիւններն համախմբել Ֆրանսայի շուրջը, Դաշնակիցներուն դիմադրելու համար: Արդարեւ ձեռք բերաւ սա յայտարարութիւն թէ վեհաժողովոյ բացումը տեղի պիտի ունենար Նոյմ: Այն, և սա բառերն ալ աւելցնել տուաւ. «Հանրային իրաւանց սկզբունքներուն համաձայն»: Իր հնարամտութիւնն էր «ազգաց իրաւունքը» եւ օրինաւորութիւնը, այսինքն օրինաւոր վեհապետներու իրաւունքը մէջ բերել, թոյլ չտալու համար դաշնակիցներուն որ դրաւումաժ երկիրներն իրենց ուղածին պէս բաժնեն: Նոյնպէս յաջողեցաւ «Նախապատրաստական ցանձնաժողովոյ մը կազմութիւնը ձեռք բերել, չորս դաշնակիցներուն եւ Բաբիլոն դաշնագիրն ստորագրող միւս տէրութեանց ներկայացուցիչներէն կազմուած (Ֆրանսա, Սպանիա, Բորգոնիա եւ Շուէա): Բայց ասոնք լոկ ձեւական զիջողութիւններ եղան: Վեհաժողովը երբեք չբացուեցաւ, եւ Դաշնակիցք իրենք միայն տուին որոշումները:

ՇՈՂԱՅԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիա պահեց իր երկրակալութիւնները (Մալթա, Յոնիական կղզիները, Հէլիկոլանտ կղզին, եւ Եւրոպայէ դուրս ալ Բարբէյոս, Սէյլան եւ Ֆրանսայի կղզին) — Աւստրիա առաւ Իլլիրիոյ նահանգները, եւ Պաւլերայի թողումաժ երկիրները: Իրրեւ փոխարինութիւն, Պաւլերայի տրուեցաւ Բալթիկնա, Հոննոսի ձախ եզերքին վրայ: Այսպէս Անգլիա եւ Աւստրիա դոհացան սոսանց վէճի: Հոլանտայի

եւ Իտալիոյ հողային խնդիրները կարգադրուեցան առանց վիճարանութեան: Պելժիա միացուեցաւ Հոլանտայի, Ստորին-Նահանգներու թագաւորութիւնը կազմելու համար, որ տրուեցաւ Օրանժի իշխանին: Իտալիոյ մէջ, Աւստրիա Միլանի վրայ աւելցուց Վենետիան ու Վալդէլինը: Սարոնիոյ թագաւորն ընդունեցաւ Ճենովայի Հանրապետութիւնը: Միւս պետութիւնները վերահաստատուեցան:

Բայց վերապահուած խնդիրներուն վրայ (Բոլոնիա եւ Գերմանիա), Դաշնակիցք պառակտեցան: Զարը կ'ուզէր պահել Վարչաւիոյ բովանդակ մեծ — դքսութիւնը, որ Բրուսիոյ բաժինն եղած էր, երբ 1793—1795ին բաժնեցին Բոլոնիան: Բրուսիա իր Բոլոնիոյ բաժինը վերստանալու փափաք չուէր, այլ նախամեծար կ'համարէր ի փոխարէն վերստանալ Սաքսոնիոյ թագաւորութիւնը: Կըրնային իրրեւ թափուր (անտէր) երկիր նկատել զայն, վասն զի Նաբոլէոնի դաշնակիցն՝ Սաքսոնիոյ թագաւորին ձեռքէն առնուած էր, որ միւս դերման իշխաններուն պէս ժամանակ չէր ունեցած դաշնագիր մը ստորագրելու Դաշնակիցներուն հետ, իր պետութիւնն եւրաշխաւորելու համար: Զարը կ'ընդունէր այս լուծումը, զի չէր ներքին Սաքսոնիոյ թագաւորին՝ Վարչաւիոյ մեծ — դքսութիւնը Նաբոլէոնէ ընդունած և «Եւրոպիոյ դատը» մատնած ըլլալուն համար: Բրուսիա և Բոլոնիա, համաձայնութեամբ, առաջարկեցին իրենց երկրին միացնել զՍաքսոնիա: Բայց Անգլիա և մանաւանդ Աւստրիա չէին ուզեր թողուլ որ Զարն այնքան յառաջացաւ դիրք մը բռնէ Եւրոպիոյ մէջ, և Բրուսիա ալ Գերմանիոյ մէջ. ուստի հակառակեցան Սաքսոնիոյ դրաւման: Թալէրան, Բրուսիոյ յաւակնութեանց դէմ Սաքսոնիոյ օրինաւոր թագաւորը պաշտպանելու պատրուակաւ, Դաշնակցաց անհամաձայնութենէն օգուտ քաղելով՝ պաշտպանողական զինակցութիւն մը կնքեց Անգլիոյ, Աւստրիոյ և Ֆրանսայի միջեւ: Սակայն իր միջամտութիւն իրապէս ուրիշ բանի չծառայեց, բայց եթէ բրուսիական բանակը Ֆրանսական սահմանադիրին վրայ բերելու: Միւս կողմէ, բրուսիացի լիազօրք նախամեծար կը համարէին որ Ֆրանսա և Բրուսիա սահմանակից չըլլան: Ուստի կ'առաջարկէին զատ Պետութիւն մը կազմել Սաքսոնիոյ թագա-

ւորին համար, Հռենոսի ձախ եզերքն անոր տալով, որ Ֆրանսայի բնական դաշնակից վեհապետի մը ներքեւ՝ կաթողիկ պետութիւն մը պիտի ըլլար: Ձարը կ'ընդունէր. սակայն միւս երկու դաշնակիցք մերժեցին, և Թալէյրան անոնց օգնեց մերժելու կարգադրութիւն մը, որ այնքան օգտակար պիտի ըլլար Ֆրանսայի վերջնական («Վիճակագրական Յանձնաժողով») մը հաստատեցին, որ Բրուսիոյ տրուելիք փոխարինութիւնը չորս կտոր ըրաւ: 3,400,000 հոգի պիտի տրուէին անոր. ուստի տըրուեցան 1. Բոլոնիոյ մէկ նահանգը, Բոզնաւիա (810,000 բնակիչ), 2. Հռենոսի ձախ ե-

զերքը (բնիչ. 1,044,000). 3. վեոգֆալիա (բնիչ. 829,000) և 4. Սաքսոնիոյ թագաւորութեան մէկ հատուածը (բնիչ. 782,000): Ձարը պահեց Բոլոնիոյ մնացեալ մասը, և խոստացաւ ուրոյն թագաւորութիւն մ'ընել զայն, սահմանադրութիւն մը տալով անոր: Հողային միւս փոխարինութիւնը կարգադրուեցան մասնաւոր դաշնագրերով: Շուէտ Բրուսիոյ թողուց Բամէրանիան. Բրուսիա ալ Տանըմարքայի թողուց Վալթէնպուրկը, ի փոխարէն Նորվեկիոյ:

(Շարունակելի)

Ահա՛ մին այն գերմանական կորովի և ուժով բանաստեղծութիւններէն, զորս մեծ դաստիարակն Ռէթէոս էֆ. Պէրպէրեան իր անժխտելի ձեռնհասութեամբ թարգմանած է տարիներ առաջ, և զորս նուիրեց Մամուրեան էֆի, անոր Յորելեանին աւելի:

ԱՌԻԺԻՆ ԶԻԱՐՇԱԻԸ

Առիւծ տըքայն է ամայեաց. իւր կալուածներն եթէ չըջիլ
Նա կառնայ, կ'երթայ մօրուտ մ'եղեգնուտին մէջ ընկողմնիլ.
Կընիւններուն մէջ կը կծկի ուր վիթք ընծուղոք ըմպել կուգան,
Ու հըզօրին վերև սաղարթք ժանտաթղենւոյն կը սարսըռան:

Երեկոյն, Հոգենդողին մինչ խարոյկներ կը կարմըրին,
Ու գոյնըզոյն փոփոխ նըշանք սեւ ըրարձրադէզ տափալերին
Ա՛լ չը փայլին, երբոր քառուն* մենիկ չըջի Քաֆրաստանցին,
Թաւուտքին մէջ նիւհէ յամոյրն ու կընուն յեզր հեղեղատին,

Անապատին մէջէն ահա՛ կուգայ ընծուղո վեհադիտակ
Որ ճահիճին պղտոր ալեօք թըջէ լեզուն թոյլ ու կըրակ.
Ծայրածաւա՛լ լերկ դաշտերէն փութայ հասնի նա հըրանուտ.
Երկայնավիզ, խըմէ ի ծունր աւազանին ջըրէն տղմուտ:

Բան մը խըրտի եղեգնուտին մէջը յանկարծ. մըռընչածայն
Յատկէ առիւծն իւր ծոծրակին վըրայ. ո՛հ, ի՛նչ երիվար այն:
Արքայական ասպաստանաց մէջ տեսա՞ւ մարդ տապճակ մ'ա՛լ ճոխ
Քան խայտարղէտ մորթ նըժուգին յոր կենդանեացն հեծնէ իշխող:

Իւր ժանիքներ կը մըխէ խոր վըզին դնդերց մէջ մոլեգին.
Հսկայ ձիուն պարանոցին չուրջ ծածանին բաշքը դեղին

(*) Քառուն, հոգենդոլեան բառ, որ հոլանտական եզած է, և կը նշանակէ Բարեյուսոյ Գլխոյն յարկ յարկ իրարու ետեւ ըրարձրացող լեռանց չղթաներուն չորացած մարահարթերը:

վերելակին . խուլ հեծմունքով վեր վեր կ'ոստնու , փախչի լլկուած ,
Ուղտին արագ քայլն , յովազին կաշին իր վրայ լրծորդըւած :

Լուսնին շողով փալիւղ դաշտէն , տեսէք , սուրայ ոտիւք թեթեւ ,
Ահնակապճէն դուրս են ցցուած աչերն , ու շիթք արեան սև սև
Թըխախայտիկ փողէն հոսին առուանըման , ու փախըստեայ
Հէք անառնոյն սրտին տրոփիւն լուռ անապատը կ'իմանայ :

Նըման ամալոյն , ոյր ուղեցոյց եղաւ շողիւնն Խորայելի ,
Իրբեւ ուրու չէկ , օղեղէն , իբրեւ ոգին անապատի ,
Աւազածով ամալոթեան մէջ աւապեայ վիշապ թաթիւ ,
Սիւն մ'աւազի դեղնագունակ իրենց ետին կուգայ ի հիւ :

Սուր կըռիշով այերց մէջէն անդղն հետեւի իրենց վազքին ,
Գերեզմանաց պղծիչ բորեան ըզհետ սնդի իրենց հետքին ,
Պնդի յովազ՝ Յուսոյ Գլխոյն փարախներու գող յելուզակ ,
Արիւն քրտինք իրենց պետին ահեղ հետոցն են նըշանակ :

Վախով կ'նային անոր՝ բազմած իւր կենդանի գահի վըրան ,
Սուր ճիրանով երգիծելով շքեղ օթոցն իւր երփներփեան .
Ընձուղտն ըզնա պարտի կըրել մինչ ոյժերուն իւր սպառում ,
Բնաւին անգոր են այդպիսի ասպետի դէմ կից , ծառացում :

Յընորակոծ կ'իյնայ եզերքն անապատին , խորդայ կերկեր .
Մեռած , պատած փողով՝ փրփրով , ձին հեծելոյն կըլինի կեր :
Մատակաքար կղզւոյն վերեւ , աիւն յարեւելս ծայր տայ հեռուն . —
Գաղանաց պետն իր կալուածոյն սահմանքն ա'յսպէս չըջի մութուն :

Թարգմ. գերմանականէն

ՖԷՐՏԻՆԱՆՏ ՖԻԱՅԼԻԿԻԱԹ

Ռ. Յ. Պ.

Ա Ձ Դ

“Հանրագիտակ”ի հրատարակիչք չու-
նին յաւակնոտ ծրագիր մը : Իրենց ծրա-
գիր կրնայ ամփոփուիլ սա երկու բառե-
րուն մէջ, ՕԳՏԱԿԱՐՆ ու ԲԱՐԻՆ : “Հան-
րագիտակ” բայ բեմ մ'է ամէն գրողնե-
րու համար , սուանց խարութեան . բա-
ւական է որ այդ երկու նպատակներն
ընդգրկեն : Իր սովորական պաշտօնակա-
թիւնք պիտի ըլլան աղգային ու քաղա-
քական դէպքերու վրայ ամփոփ տեսու-
թիւններ , գրական ընտիր հատուածներ ,
գիտական ծանօթութիւններ , պատմա-

կան ակնարկներ , զանազան դասախօսու-
թիւններ : Առ այժմ պիտի հրատարակ-
ուի 16 էջով , բայց տարեգլխէն սկս-
եալ իր ընթերցողներուն պիտի տայ նաև
վէպ մը , ութ երես , — գրքի ձեւով տըպ-
ուած : Եւ եթէ քաջալերութիւն գտնէ ,
մօտ ժամանակէն 16 երեսին վրայ պիտի ա-
ւելցնէ 8 երես ևս , առանց գնոյ փոփո-
խութեան : Կը սիրենք յուսալ թէ ժողո-
վուրդն ընդհուպ պիտի ընձեռէ մեզ մի-
ջոյ՛ր՝ մեր այս փափաքն իրագործելու :

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
500 EAST 57TH STREET
CHICAGO, ILL. 60637
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE
BUREAU OF PLANT INDUSTRY
WASHINGTON, D.C. 20250

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
500 EAST 57TH STREET
CHICAGO, ILL. 60637
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE
BUREAU OF PLANT INDUSTRY
WASHINGTON, D.C. 20250

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
500 EAST 57TH STREET
CHICAGO, ILL. 60637
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE
BUREAU OF PLANT INDUSTRY
WASHINGTON, D.C. 20250

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
500 EAST 57TH STREET
CHICAGO, ILL. 60637
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE
BUREAU OF PLANT INDUSTRY
WASHINGTON, D.C. 20250

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
500 EAST 57TH STREET
CHICAGO, ILL. 60637
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE
BUREAU OF PLANT INDUSTRY
WASHINGTON, D.C. 20250

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՎ ՍՊԱՐԱՆԻՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն օր եւ ամեն գիշեր մինչեւ լոյս բաց է
կը տպէ ամէն լեզուով եւ ամէն տեսակ տառերով տեսարաններ, հաշ-
ուեցոյցներ, նամակագրութիւն, այցաքարտ, մահազդ, հարսանեկան հրաւիրա-
գիր, եւ այլն, շքեղ ու մաքուր տպագրութեամբ:
ԳԻՆԵՐԸ ՇԱՏ ԶԱՓԱՒՈՐ ԵՆ ԳԻՄՆՑԷՔ ԵՒ ԳՈՎ ՊԵՏԻ ՄՆԱԿ

ՏԵՍ. ԵՒ ԳՈՐԾ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒԻ

Յօրինեց՝ ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Տարրական ընթացք. — 80 երեսէ բաղկացեալ. կը պարունակէ 54 ընթերցում եւ 242 հրահանգ, մին քան զմիւսն շահեկան: Գին 2 դրուշ:

Միջին եւ Բարձ. ընթացք. — 208 երեսէ բաղկացեալ. կը պարունակէ 50 ընթերցում, լաւագոյն հեղինակներէ քաղուած եւ 200 հրահանգ: Գին 4 դրշ:

Սոյն երկու ֆերականութիւններն իրենց տեսակին մէջ լաւագոյններն են, եւ հետեւեալէս ջերմապէս կը յանձնարարենք Հայերէնի ուսուցիչներուն ուշադրութեան:

Ազգ. վարժարաններու համար 25 առ հարիւր զեղէ:

**ՏԱՐՐԱԿԱՆ ԹՌԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՄՏԱԻՈՐ ԵՒ ԳՐԱԻՈՐ**

Ա. Եւ Բ. Տարի

Յօրինեց Գ. Գալաֆեան

Գ. անգամ տպագրուեցաւ կարեւոր յաւել-

լումներով: Իբրեւ թուաբանութիւն, իր տեսակին մէջ վերազանց է իր մէթոտով, իր պարունակած գործնական խնդիրներով, եւ շահեկան գիտելիքներով, յատկապէս կրթական ծրագրին համաձայն օրինուած՝ տարրական Գաւընթագքներու համար: Կը յանձնարարենք բոլոր թուաբաններու ուշադրութեան: Գին 4ուկէս դրշ. — Կեդրոնատեղի Պաշենց Գրատուն:



ԱԶՆԻՒ ԸՆԹԵՐՑՈՂ

Կ'ուզե՞ս հեշտիւ խմել

Անխառն իւղ Մօուի Չկան

ՀԱՃԷ՝ ԴԻՄԵԼ

Կէտիք—Փաշա Պաշի

“ՍՈՒԼԹԱՆԻՆ” Ժառօթ Գեղարան

Զոր կը վարէ Լ. Կիւմիւշեան

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

“Հանրագիտակ, ի վերաբերեալ ամէն գրոշքի չնկատք է ուղղել “Օստիկ, ի Տպարան, առ Տնօրէնութիւն “Հանրագիտակ, ի: